Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2026 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Ուսումնասիրել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերը:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունների հիմքով առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման և վերահաշվարկին վերաբերող ընթացակարգերի՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններին համապատասխանության մոնիթորինգ:
- Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով իրականացնել 2025 թվականի ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ վերլուծություն, ինչպես նաև հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակել 2025 թվականի 4-րդ եռամսյակի (տարվա սկզբից՝ աճողական) ընթացքում հանձնաճողով ներկայացված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2025 և 2026 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության բնագավառը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշները: